


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրկարից համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիմ: Եկու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիմ:
Զհրատարակուած շրոթիւնը եւ յտրոյր:

Հասցէ
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՔՍԱՆ ՀԱԶԱՐ ՔՐԱՆՔ

Կլորիկ գումար, իրաւ որ հրա-
պուրիչ քանակութիւն մըն է 20,000
ֆրանքի գումարը, զոր գանձելու փոր-
ձութեան մէջ ինչպէս են վերջերս քա-
նի մը անձնաւորութիւններ՝ յանուն մա-
տաղ որբերու և այրիներու:

Մեր ընթերցողները կը յիշեն ան-
շուշտ, թէ Պուրկարի մէջ նոր նուիրա-
տումներ ելած են, որոնց մէկ պատճէ-
նը հրատարակեցինք «Հայելի»-ի նախ-
ընթաց համարին մէջ:

Պուրկարի Պատ. Թաղ. Խորհուրդին
ուղղած էինք խնդիրը լուսաբանելու
մտքով, մէկ քանի հարցումներ, որոնց
պաշտօնական պատասխանը շնորհակա-
լութեամբ ստացած ենք:

Ահա թէ ինչ կը գրեն մեզ.

Խմբագիր «Հայելի» շաբաթաթերթի.

Թերթի օգոստոս 15 թուոյն մէջ, Պուր-
կարէն զրկուած ի նպաստ անհեր որբ

եւ որբուհիներու 1 մ. ւոյնց նոր հրատարակ-
ութեան մը հրատարակելով կը յայտարարէք
նաեւ թէ արդէն քսան հազար օրինակներ
տպուած են նոյն տոմսակներէն, ժողովրդ-
եան մէջ սպառելու համար:

Արդ՝ ներկայիս կը փութամք յայտնել
թէ՝ որբերու նպաստամասոյց ժողովի
մը գոյութիւնը անձանցով է խորհրդոյս,
և այդ մասին անձնական կամ՝ պաշտօնական
ո ու է գիմուս եղած չէ մեզ:

Ի Գիմուս լուսաբան խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Միխայէլ Խպէեան Վեորգ Չառեան

ԿՆԻՔ

Պուրկար, 22 Օգոս. 98

Այս գրութենէն դուրսն է հետե-
ցնել թէ «նուիրատուն» հեղինակները
ազգային ձեռնհաս իշխանութեան հետ
պաշտօնական ո՛ր և է կապ չունին և
ինքնազլ լին ձեռնարկած են գործին:
Այս բաւական չէ, թէ՝ գրաւոր և թէ
բերանացի մեր ստացած տեղեկութեանց
նայելով. քսան հազար ֆրանքի ստեղծիչ
պարոնները անպայման վստահութեան
արժանի, ծանօթ անձնաւորութիւններ
չեն: Այս պարագաները շատ բնական է

որ կասկածներ արթնցնեն և գայթակղութեանց պատճառ դառնան, քանի որ մանաւանդ գարշելի նախօրինակները բազմաթիւ են այսօր մեր մէջ:

Թալ. Խորհուրդը, որ փութաց իր պարտականութիւնը լրջօրէն կատարելու, անշուշտ պիտի ջանայ նաև անմիջական կերպով «Նուիրատոմս»ի հեղինակները գտնել և իրենց ձեռքէն առնել այդ սպեալ թուղթերը, որպէս զի միամիտ հասարակութիւնը կարգ մը անծանօթ և ո՛վ գիտէ, գուցէ բազդախնդիր անձերու ծուղակը իյնալու գժբաղդութիւնը չունենայ վերստին:

Ասկէց զատ, Պատ. Խորհուրդին պարտքն է իսկոյն հետամուտ ըլլալ իմանալու, թէ մինչև ցարդ ո՛րչափ նուիրատոմսեր ծախուած են և ի՞նչ եղած է գանձուած գումարը. մէկ խօսքով, պաշտօնապէս և ազդու միջոցներով պէտք է հաշիւ պահանջէ և թոյլ չի տայ որ այդ կարգի գայթակղեցուցիչ քայլեր առնուին իր աչքին առջև գտնուած շրջանակի մը մէջ:

Կը հրաւիրենք նաև Նուիրատոմսի հեղինակները, որպէս զի անմիջապէս ներկայանան Թաղականութեան և առանց այլև այլի, մանրամասն և ճշգրիտ հաշիւ տալէ յետոյ ազգային իշխանութեան յանձնեն դործը:

Կը խնդրենք նաև ամեն կողմի մեր ազգայիններէն, որպէս զի զգոյշ գտնուին և իմաստութեամբ ամեն ջանք ի գործ դնեն ասպարէզը մաքրելու համար:

Կը կրկենք այս տեղ որ «Նուիրատոմս»ի հեղինակներուն նպատակը ինքնին ամենուս համար համակրելի է, միայն թէ իրենց գործունէութեան միջոցը լաւ չէ և կրնայ շատ գէշ օրինակ ըլլալ անանկ դատարկաշրջիկ անձերու, որոնք սանձարձակ անիշխանութեան ու պղտոր ջուրերու մէջ կը սիրեն իրենց

անօթի փորին ձուկեր ոչտալ: Մենք որբերու և այրիներու ի նպաստ դրամ հանգանակելու գաղափարը ծափահարողներէն ենք, միայն կը պահանջենք որ գործին զեկավարութիւնը վստահելի և ազգային ձեռնհաս իշխանութենէն ճանչցուած և ընդունուած անձերու ձեռքը գտնուի:

Ուրախութեամբ կը լսենք թէ վառնաէն ծանօթ անձնաւորութիւն մը մերժած է իրեն զրկուած այդ «Նուիրատոմս»երը և չէ ուղած շրջաբերութեան հանել զանոնք, անշուշտ խորհելով որ գուցէ մեղսակից պիտի ըլլայ քանի մը անծանօթ անձերու արարքին:

Տակաւին չենք գիտեր թէ ուրիշ տեղեր ալ զրկուած են սակայն անհրաժեշտ կը համարինք ազդարարել ոյ, առ այժմ ոոյն գործը քաջալերելի համարել կարելի չէ:

Ասով, կը կարծենք, թէ մենք մեր հրապարակագրի պարտականութիւնը կատարած ենք և այժմէն ամեն վստահութիւն ունինք թէ Պուրկապի Պատ. Թաղականութիւնն ալ պիտի փութայ պէտք եղածն ի գործ դնելով գայթակղութեան առաջըր առնել:

Կը սպասենք:

ՕՐԸ ՕՐԻՆ

ՄՈՒՆԵՏԻԿԸ՝ ՎԱՐԺԱՊԵՏ

Սեպտեմբերը մօտեցաւ, վարժարաններու բացումին ատենը հասաւ. հագարձուներ քաղքէ քաղաք վազելով չէնք շնորհք վարժապետ կը փնտռեն, վարժապետներն ալ պակասին կապած՝ ամսէ ամիս կանոնաւորապէս վճարելու կարողութիւն ունեցող հոգաբարձու կը փնտռեն, այս ժխորին մէջ քեզիսպին

մէկն ալ «արդեօք կրնամ ինչպէս մը ձեռք անցունել» ըսելով, վարժապետական պաշտօն մը առնել կաշխատի, որուն մանրամասնութիւնն է հետեւեալը.

Ոսկերիչի այս զուարճախօս մունետիկը, որ Պոլսոյ գէպլէին պատճառաւ, շատերու պէս, Պուլկարիոյ հայաշատ քաղաքներէն մէկը գաղթած էր, լսելով որ տեղւոյն վարժարանին համար ամիսներէ ի վեր կառավարիչ մը կը փնտռուի, ինքն իրենը «ես աս դործը կրնամ ընել» կըսէ ու քանի մը գաւաթ կոնծելէ ետքը, շունչը շփտակ թաղական խորհրդարանը կ'առնէ:

— Ի՞նչ կ'ուզէք, — կը հարցնէ թաղական մը:

— Իմացայ ոչ վարժարանին համար կառավարիչի մը պէտք ունիք, եկայ յայտարարել թէ այդ պաշտօնը ես կրնամ ստանձնել:

— Ուրիշ անգամ ասանկ պաշտօնի մը գլուխը գտնուած էք:

— Անգամ մը, Պոլիս, մեր գեղին վարժապետները ամսականին չառնելուն համար երբ դորձագուլ ըրին, երկու շաբաթ ինծի տարին անոնց տեղը կայնեցուցին, հետեւաբար յարմարութիւն ունիմ. շաբաթ մը փորձեցէք զիս և պիտի համոզուիք:

— Ինչքանութիւն դիտէք:

— Ըստ բաւական ին:

— Ընտանիք բաւը ի՞նչ մասունք բանի է:

— Չայնարկութիւն:

— Ինչէ՞ն:

— Որովհետեւ երբ դիչեր մը դատարկ ձեռքով տուն դառնանք, մեծ ու պզտիկ կը սկսին ձայնարկել:

— Վարժապետը ի՞նչ մասունք բանի է:

— Առաջ գոյական էր, բայց հիմա հարկեցուցիչ պատճառներ զայն անական վերածեցին:

— Ատանկ բան կըլլայ:

— Ինչո՞ւ չըլլար, ամսագլխուն՝ ըստակը չառնող վարժապետը դիչերը մինչև լուս հաւկիթ կածէ, ասիկա կենդանի օրինակներով կրնամ հաստատել:

— Դուք ի՞նչ պաշտօն կրնաք վարել:

— Ըսինք ա՛, տղէկ կառավարչութիւն կընեմ:

— Ըմբոստ գտնուող աշակերտը ի՞նչ դրութեամբ պիտի զգաստացնէք:

— Հիմակուան հրել, հրմշտիկել, կաթտել, ու երբեմն հայհոյելու դրութեամբ, քանի որ ծեծը վերցուած է:

— Օ՛, ադ չեղաւ, ատոնք բարբառոտութեան դարձն մնացած են:

— Աշակերտներս ալ քաղաքովարեալ զաւակներ չեն ա՛:

— Կը ցաւինք որ վկայական չունենալնուդ պատճառաւ...

— Ի՞նչ վկայական:

— Ձեր կարողութիւնը գծող:

— Կարողութիւնս տեղը ըլլար նէ, վարժապետութիւնը ի՞նչ պիտի ընէի, ուրեմն վկայականի պէտք չեմ տեսներ:

— Մեր հարցուցածը ադ մտքով չէ՛ վկայականէն կրնանք հասկնալ ձեր ունեցած վիճակը և...

— Աղբար, իմ վիճակիս վկան ես եմ, ի՞նչ հարկ կայ ուրիշին հարցնելու:

— Բայց բարեկամ, դուք մեր ըսածը չէք հասկնար կոր. կաղմական կանոնագրի համեմատ, վարժապետ եղողը՝ Ուսումնական խորհուրդէն վկայական մը ունենալու է ձեռքը. եւ քանի որ ատիկայ չունիք, երթաք բարով, բարի եկա՞ք:

ՊԱՏԱՍԻԱՆ

Առ Տ. Հայկ. Ի Լոնտոն. — Պայմանաւոր բաժա՛որդագրութիւն չենք ընդունիր: Արտառո՛ց բան:

ՍԵՂՄԻՐԱՆ

(ՔՕՐՄԷ)

Թէեւ ամենքս ալ գիտէինք թէ քօրսէ կոչուած կամաւոր յռանկաւ, զինքը գործածողներէն շատերու շնչաւութեան գործողութիւնը եւ արագ շարժումները արգելիլով, տեսակ տեսակ վտանգաւոր հիւանդութեանց կը պատրաստէ զանոնք ուշ կամ կանուխ, բայց չը գիտէինք թէ այդ տանջանաց գործին երբեմն տան մը խաղաղութիւնը մշտնջենաւորապէս խանգարելու քաջագործութիւնն ալ կրնայ եղեր ունենալ, որոյ օրինակն է հետեւեալը.

Անցեալ տարի, գաղթական միջին կարգի արհեստաւոր երիտասարդ մը՝ աղքատիկ աղջկան մը հետ պիտի ամուսնանար. — աղքատ եւ միջնակարգ ծնողաց աղջկունք թէեւ այնչափ չեն գործածեր քօրսէն, բայց պաշտօնական օրեր ասոնք ալ քիչ շատ մէջքերնին վերոյիշեալ տանջանաց գործիքով սեղմել եւ տասը մարանոց Ախմիթի մը ձեւը դնել կը պարտաւորին. — ուստի հարսը հագուեցնող բարեկամ օրիորդք, մօտայի կանոններուն տեղեակ եղող հարսնքուրին հետ խեղճ հարսին քօրսէին կապելը իրենց բոլոր ուժովը կ'սկսին քաշել.

Հարսը — Աման, ոտուընիդ պագնեմ, բէք մի քաշէք, հիմա ճիշէրս գուրս պիտի իյնայ:

Հարսնքուրը — Զարար չունի, ալըշմիշ կըլլաս. հապ, հարս ըլլալը խօլոյ ման է. նայէ՛, մէշկդ ի՞նչ ազւոր պիշիմի եկաւ:

— Աղէկ ամա, նստիմ նէ՛ քօրսէիս պալէնաները կուշտս պիտի խըխին:

— Պաղտաշ չի պիտի նստիս ա՛, հոն երթանք նէ սէտիրին մէկ քէօշէն բարձի մը վրայ սանկ իլիշմիշ պիտի ըլլաս քի, կեսուրդ, տալըդ, տագրդ, կնքահարդ ու կնքամարդ օտային դուռնէն ամեն մէկ մտնել էլլենուն խօլայ մը օտկի էլլաս. էյէր օր բանի մը պէտք ունենաս նէ՛ ես բովդ եմ, կամացուկ մը ինծի ըսէ:

Այս հրահանգը հարսին տրուելէն մէկ ժամ ետքը, փեսին կողմէն հարսառի կուգան եւ ըստ սովորութեան՝ հարսանեկան ձեւակերպութիւնները կատարելէ ետքը հարսը փեսին տունը կը տանին: Խեղճ հարսը դէլ-խէն կախուած կէս օխանոց թէլիէշէին ծանրութենէն կորագլուխ, եւ քօրսէին պատճառած սրտին ցաւէն ահաւանդուած սեղմելով, կեսրոջ եւ խել մը տիկնանց ձեռքերը ծռելով պագնելէ ետքը մինչեւ որ բազմոցին մէկ անկիւնը կերթայ կը կանգնի՝ մարիլիք կուգայ վրան: Անմիջապէս տիկնանց մէջ բարսուքը կ'սկսի:

— Էլմոն հանըմ, իմ աշկիս պերանը քիչ մը մննձ կերեսայ կոր:

— Պզտիկ չի սեպուիր, քուրուկ, օրթա ալ չէ տէ ինչ եմ կըսէ ատանկընա.

— Աճապա Տօմիկցայիս խտար կայ. տնիկայ Աւարգափարին երկուշաբթի օրը 19ը լմնցուց բսանը մտաւ:

— Քա չէ՛ գուռ ալ. տնիկայ տահա էրէկի չօճուխը կը սեպուի, ատիկայ չի ցուցնենք կոր ամա ըսահաթ բսան քսանը հինգը ըլլալու է:

— Ինչ կուզեն նէ ըսեն, պիր թիւրիւ սիրտս չի սիրեց.

— Ամա ինտո՞ր սա հաճի պէճէրիկսիդը պէճէրից տէ աղջիկը տեղաւորեց:

— “Էր օլ, պաշ հարս ըսեր են քուրուկ, ամեն պանի ալ թայէհ պէք կէ:

Պահ մը ետքը ճաշի ատեն ըլլալուն, ամենքն ալ սեղան կիջնեն: Խեղճ հարսը քօրսէին պատճառած նեղութենէն դժուարաւ կրնայ նստիլ, եւ հարսնքուրի ստիպումներէն շփուր հագլի կրնայ բանի մը պատառ բան ուտել:

Ամբողջ երկու ժամ խեղճը այսպէս տանջուելէ ետքը երբ սեղանէն կ'ելլեն, հարսնքուրին ահանջին կըսէ. — Աման, ոտքդ պագնեմ, վրաս մարելիք կուգայ կոր, քիչ մը սա քօրսէս թուլցո՛ւ.

— Քիչ մըն ալ առդադ սխմէ, պսակէն ետքը կը հանուեցնեմ. հիմա քօրսէիդ կապը թուլցունելու համար թէքմիլ ֆիստանդ հա-

նեւ պէտք է, հէմ կուստօթ ալ պիտի աւ-
րի. մէջիդ պիշիմը տեսնաս ի՞նչ աղւոր է:

Հէք հարսը հոգին բերանը եկած, ըզ-
գացած ցաւէն երեսին գոյնը մոխիր դարձած,
կը պարտաւորի սպասել: Գիշերուան ժամը
վեցին պսակի պատրաստութիւնը կսկսի. հար-
սը հարսնքուրին թեւին կը թնամ հազիւ սե-
նեկին մէջտեղը կուգայ, բայց չկրնալով ոտքի
վրայ կենալ, կը մարի:

Տանը մէջ գտնուողք իրար կանցնին, ու
մանք ջուր կը վաղցնեն, ոմանք սրուակներ կը
փնտռեն, — մինակ քօրսէն է որ լոսիկ մնչիկ
իր տեղը նստած է, — իսկ փեսին մայրը կը
գոչէ:

— Բա՛ւ առ ի՞նչ ծուն էր օր թէփէիս
ինչաւ. ոա մութլախ սիրող մը ունի, սրչիւ
մարեւէն պէլլի եղաւ քի սիրտը տղիս վրայ
տար չէ:

Հարսնքուրը—Աս ի՞նչ լախտներ է ան-
կաճ կը հասնին կոր, մեր աղջկան անունը
օխտը ճուր վրայ տէ անկէ ետքը բերանդ առ:

— Անանկ է նէ, իլլէթլի է, մարեւիք
ունի:

— Արան բարի, ինչո՞ւ ըլլայ իլլէթլի.
քօրսէին սրխը յուրանէն վրան քիչ մը մարե-
ւիք եկաւ:

Չերկարենք, խեղճ հարսին խելքը դը-
լուիւր բերելէ, նա մանաւանդ կեսրոջ բոր-
բօրեալ սիրտը դժուարաւ հանգարտեցնելէ
ետքը պսակը կը կատարուի:

• •

Թէեւ այս դէպքին վրայ ամբողջ տա-
րի մը անցած է, բայց կըսեն թէ կեսուրը
այն գիշերուանէ ի վեր հարսին վրայ սէր
չունենալով, շատ անգամ անտեղի պատճառ-
ներով հարսը կը նախատէ եղբր, « Դուն
իլլէթլի ես, դուն մարեւիք ունիս» եւա յընձնե-
րով, որով հարս ու կեսուր կը կռուին և տան
խաղաղութիւնը դոնէն դուրս կը վանտեն եղբր:

Ահա՛ քօրսէին քաջագործութիւնը: Յ.

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ ՄԸ

Փարիզի մէջ խեղճուկ կին մը փողոցը
նստած իր հացին ստակը ճարելու համար
վայրի ծաղիկներէ փոքրիկ փնջիկներ կը կապեր
և քովը կեցող իր մանկանը կուտար, որ
անցորդներուն ընծայելով՝ անոնց քսակներէն
կամ աւելի լաւ է ըսել անոնց սրտերէն բան
մը փրցնէ: Բայց հազարներ անցան դարձան
ու խեղճ տղեկին երեսն անգամ նայող չեղաւ,
ոչ վերջապէս յոգնած, պարտասած, իր մօրը
քովը եկաւ, նստաւ:

Մայրը, յուսաբեկ հոգեհատորին այս
աղելսարչ վիճակը տեսնելով, սիրտը ելաւ և
ծաղիկները ձեռքէն ինկան, իր գոգը թա-
փեցան: Իրենց այս յուսակտուր վիճակին մէջ
երբ երկուքն ալ կարտասուէին, տեսն Վգն-
ղիացի մը որ իր աղջկան թեւը մտած կուգար:
Փոքրիկ տղեկը զանոնք տեսնելով նոր ոգի մը
առաւ և տեղէն ցատկելով, գեղեցիկ փնջիկ
մը ներկայացուց մանկամարդ աղջկան, որն որ
խեղճ մանկան բիւրուրուն վրայ փայլող արտա-
սուքները տեսնելով, հօրմէն գաղտուկ և ան-
համեմատ ճարպիկութեամբ մը հասնեց 20
Ֆրանքնոց ոսկի մը տուաւ տղեկին եւ ճամ-
բան շարունակեց:

Մայրը տղուն ձեռքը 20 Ֆրանքնոց մը
տեսնելով, ռիալման մը արգիւնք համարեց
ու սկսաւ պարոնին ետեւէն վազել, ըսե-
լով թէ «սխալ ստակ տուած եմ»: Օրիորդը
թէպէտ չլսել ձեռացուց, բայց հայրը դար-
ձաւ ու գործն հասկնալ ուղեց:

— Հայր, ձգէ, այն ստակը մերը չէ,
խեղճերուն ապրուստը մի՛ խլեր. կըսէր սիրուն
աղջիկը:

— Չէ՛, աս ստակը բոլ քովէդ ինկած
է, կը պատասխանէր հայրը, դեռ առաւօտուն
քեզի տուի:

— Հայր, մի՛ ըներ, մի՛ ըներ, ողորմէ՛
այս խեղճերուն, կը կրկնէր բարի աղջիկը և
կարտասուէր:

Եւ արդէն իսկ հայրը 20 Ֆրանքնոցը

իր քսակը տեղաւորած էր, ըստ անկէ 100 ֆրանքնոց պանքնոթ մը հանելով խեղճ կընկանը տուաւ, ըսելով իր աղջկանը:

— Եթէ դուն այս կնոջ աղքատութիւնը 20 ֆրանքի արժանի դատեցիր, աղջիկըս, ես ալ անոր առաքինութիւնը 100 ֆրանք արժեցուցի:

Հիմա որուն առաքինութեան վրայ աւելի զարմանալու է, աղջկան գթասրտութեանը, կնոջ արդարասիրութեանը, թէ մարդուն վեհանձնութեանը:

Թարգմ.

ՄԺԱՄՊՈՒՏԱ. ՖԱՄԻԼԵԱՃԱ. ՀԱՆԼԵՐ

ԵՎ ԻՏԱՐԵՍԻ

— Օ՛, սէֆա կէլտինիզ, մատամ, պու նէ՞ րիւզկեար էստի պագալըմ:

— Սէֆա պուլտագ. հիչ պիր րիւզկեար էսմէտի, արզու իթտիմ կէլտիմ:

— Թէչէք քիւր իտէրիմ, սաղ օլուն, էքսիք օլմայըն. լաքին սիզի պիրաղ տիւշիւն-ճէլի կէօրիւյօրըմ:

— Հագգընըզ վար. էյի բի էվլատըն եօգ. էվլատըն վար, տէրտին վար:

— Մատամ, տէմէյինիզ պէյլէ. էվլատտան թաթլը նէ՞ վար. հալի իլէ թիքէնսիզ կիւլ օլմազ իսէ տէ, մասլահաթ նէ իմիշ պագալըմ:

— Մասլահաթ շու բի, գըզըմը պաղը իսթէյէնլէր վար:

— Բէք ալէա, մէմնուն օլմալըսընըզ, սիզին կիպի տիրայեթլի պիր վալտէնին գըզը թապիի տիր բի էվլէնիպ վէ պիր ֆամիլեա թէչքիլ իտէպիլէճէք խասսէլէրի մալիք տիր. մէսէլա, ալ չօգ ֆրանսըղճայա աշնա օլուպ, պաշ աղրըթաճագ գատար րիյանօ, պաղը օբէլէթլէր տալի պիլտիյի կիպի, կիւզէլ ալագ օլունլարը, պէզիք վէ սաիր գուճար օլունլարը տալի պիլիպ, էզիլիպ, պիւպիլիպ, գրըլըպ տէօբիւմէքլէր, ճըրճըր պէօ-

ճէյի կիպի սէյլէյիպ կիւլմէքլէր, էյի կիյինիպ գուշանըպ, մօտա էլպիսէլէր վէ շարգալար ճիհէթինտէ տալի թապիի եէքթա օլմալը տըր. պէյլէ պիր գըզը քիմ ալմազ:

— Էֆէնտիմ, սիզ բուսուլանըզ շաշըրմըշընըզ կիպի կէօրիւյօրըմ:

— Աֆվ իտէրտինիզ, մատամ, նէ՞ իւշիւն բուսուլամը շաշըրմըշ օլմալըմ, ֆէնա՞ մը սէյլէյօրըմ, մէկէրչի պիր գըզ պու ալաֆըրանկա վէ նաղիք խասսէլէրի մալիք օլմատըգճա պիր ֆամիլեա թէչքիլ իտէպիլիմ մի, իհիթիմալի վա՞ր մը:

— Պէնիմ էֆէնտիմ, բուսուլանըզ շաշըրմըշընըզ տիյօրսամ, հագգըմ վար. շիւնքի պու տէտիյինիզ խասսէլէրի պիր ֆամիլեա թէչքիլ վէ իտարէ իտէպիլէճէք գըզլարտա արամամալը. անճագ, ախլէագ պօղուզլընա սիւլիք իտէն գատընլարտա արամալը, վէ անլէրէ մախսուտ տըր. էվլէնիպ վէ պիր ֆամիլեա իտարէ իտէպիլէճէք գըզլարտա արամամալը շէյլէր քեամիլէն պաշագ շէյլէր տիրէր:

— Մատամ, ինայէթ պույուլընըզ տա սէյլէյինիզ պագալըմ, շու սիզին պիլտիլէրիինիզ նէ՞ իմիշ:

— Պէնիմ պիլտիյիմ շու բի, էվլէնէճէք պիր գըզ՝ ալ չօգ օգուլուպ եագագ վէ ըագգամ հիսապարը պիլտիքտէն սօնրա, կիւզէլ էլ հիւնէրլէրի վէ քէսիպ պիշմէք վէ տիքմէք պիլմէլի. շամաշըր, եւմէք բիշիրմէք, իւթիլ գօլա, թէմիլիք, էվլէ նէ մըգտար մէսարիֆ օլույօր, գօճասընըն հալինի պիլիպ ընա կէօրէ գարու աչմագ, միւսրիֆ վէ թէնպէլ օլմամագ, հէր սաաթ էվին իշլէրի, իտարէսի վէ ֆամիլեանըն սաատէթինէ տաիր իշլէր իլէ մէշըուլ օլմագ, աղըր պաշլը, նամուպը, քեամիլ, թէրպիյէլի, տիրայեթլի վէ նէլաքէթլի օլմագ տըր:

— Անլատըմ, մատամ, սէն տաթթա խաւարեալսըն:

— Խաւարեալ, լուսաւորեալ, ալաֆրանկա, պու զէվլէքճէ լաֆլար իլէ էվ տէյիլ. քիւմէս պիլէ տէօնմէզ:

— Իհիթիմալ գըզընըզ պիր վսիմափայլ

եախօտ պիր վսեմաշուք էֆենտի ալըր տա
խըզմէթ իթմէյէ տէ հիչ պիր լիւզուժը օլմազ:

—Վսեմափայլ վէ վսեմաշուքլար քիմ-
լէր տիրլէր:

—Ալէսսէվիյէ զէնկիլէրէ վսեմափայլ վէ վսե-
մաշուք իւնվանը վէրիրիզ քի, պէօպիւրլէնիպ
տէ ֆաբըր ֆուքարայա զիյատէճէ բարա
վէրսինլէր:

—Պու ինճէ հիսապա ապլըմ էրմէզ
խէ տէ, շայէտ պիր զէնկիլէն տախի վէրսէմ
գըզըմը՝ վէ հիչ պիր խըտմէթ իթմէյէ մէճ-
պուրիյէթի տախի օլմազսա, եինէ լազըմ քի
էվ իտարէսի նէ տէմէք իսէ՝ իյնէտէն իբ-
լիյինէ գատար պիլսին, չիւնքի տիւնեանըն
պին տիրլի հալի վար օլտուղու կիպի, է-
վին խըտմէթճիլէրինէ պըրաբըլտըղը հալտէ,
էվ ազ վաբըլթտան Եօլ կէչէն խանընա
տէօնէր, նէ ալան պիլիլի նէ վէրէն օլուր,
պիր վաբօրըն գարտանը թայֆայա տիտ օ-
լան խըտմէթլէրի իճրա իթմէզ աժմա, ա-
նըն վաղիյֆէսի նէտէն իպարէթ իսէ պիլիլի,
վէ պիր գուսուր իթտիյինտէ թէքտիր իտէր:
Սիղ պիր թազըմ զէվղէբլէբլէրէ, բէալէթ-
լէրէ ալաֆի. նաղարը իլէ պազմագտա օլ-
տուղունըղ իչիւն տիր քի, գարը գօճա
գաժալարը տա էքսիք տէյիլ տիր:

—Հագգընըղ վար, մատամ:

—Էվվէթ, հագգըմ վար զահիր, պիր
գատըն քի՝ սիկարա աղղընտա, էքքէբլէր իլէ
պաշ պաշա սապաշլարա գատար գուժար
օյնար իսէ՝ պուճու ալաֆրանկա՞մը զանն
խտիօրսունուղ, բէգալէթին պէօյիյիւ տիր.
օնլարըն գօճալարը ատէթա տալգաժուգ
տըրլար, պէօլէ վալիտէլէրին շու չիքքին
հալլէրինտէն իպրէթ ալաճագ էվլատլա-
րըն հալի իլէրուտէ նէ՞ օլմանըն իհթիմալի
վարըսա մալիւմ:

—Հագգընըղ վար, մատամ:

—Էվլին իչինտէ նէ քի տէօնէր իսէ,
գօճասընըն քէսէսինտէ գաչ զրուշ պուլըն-
տըղընը, գասապըն, պագալըն, էքմէքճինին
նէ թալէպ իթտիլէրինի պիլմէյիպտէ եա-
լընըղ շաբգասընըն վէ ֆիստանընըն սիւսիւ
վէ մօտասը իլէ օղրաշան պիր գարը օ էվին

վէ ֆամիլեանըն եըզըմը վէ զաղէպի տիր:
Պու կիւնլիք պու քատար էլվէրիլ, եինէ
կէլիպ կէօրիւչիւրիզ, ատիէօ:

—Ատիէօ, մատամ, պէքլէրիմ:

(Ճ. Շ.)

ՏՕ-ՔԹ. ՃԵԼԱԼԻԱՆ

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ԿԻՇԵՐՈՎ ՏՈՒՆ—ՏԵՍ

Շարաթ գիշերուան
Ժամը ճիշդ ինն էր,
Տունէն մեկնեցան
Երեք անձինքներ:

Տիկինը մըտաւ
Միսիւին թեւը,
Իսկ Կակօս այրը՝
Քաշեց Փէնէնը:

Ասոնք՝ գիշերով
Տուն-տեսկերթային
Դէպի Իպրահիմ
Աղա դաբուսին:

Եթէ ցորեկը
Այս բանն ընէին,
Օձիքնին անշուշտ
Ձեռք պիտի տային:

Ձար լեզուները
Թէև կըսեն թէ,
Պատրուակ մըն էր
Ասոնց տուն-տեսը.
Բայց մեր ինչո՞ւն
պէտք:

Խորը չի նայինք,
Մինակ տեսածնիս
Պատմենք ու անց-
նինք:

Ամայի տեղ մը
Գտան պզտիկ տուն,
Այլ՝ տանտէրով էր,
Ձեկաւ գործերնուն:

Անոր քովի տունն
Աչքէ անցուցին,
Բայց չի հաւնեցան
Շէնքին ու ձեւին:

«Վարը նեղուածք է»
Ըսաւ պարոնը,
«Վերն ալ ֆէրահ չէ»
Վճռեց տիկինը:

«Մաֆիճէ ըլլայ,
Հոգ չէ՝ նեղուածքը,
Շեշտեց անգիւն
Կակօս աղբարը:

Ու երբ ուրիշ տան
Մը սանդուղէն վեր
Պատրաստուէին
Երեքնին ելնել,
Ահա տակալի
Քամի մը փչեց,
Ֆէնէնին մէջի
Մօմը բո՛ւֆ մարեց:

„„

Վերջին տուն-տեսն
էր,
Խոր մութը պատեց.
Ձգգիտենք թէ ե՞րբ
Մեկնեցան անկէց:

Զիպաշօր

 ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ
ՎԱՌՆԱ

Արնդունուին թոշակաւոր աղջիկներ և փոքր մանչեր, որոնք Օր. Լ. Ամիրխանեանցի վարչութեան ներքե կուսանին հայերէն, եւրոպական լեզուներ և դաշնակ:

Վարժարանը կը բացուի առաջիկայ սեպտեմբերին: 2



ԲԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերական երգերու և պարերու. նաև վիճակ ընկերական: Գին մէկ ֆրանք:



ԳՈՒՇԱԿ
ԱՊԱԳԱՅԻ

կամ քուարձալի Բաղդադցոյ ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով, դիմել խմբագրութեան:



ԿՈՇԿԱԿԱՐ
ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Մուսալլա, հաճի հասան աղաի օթէլին տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ չինել տալ ուզողը պէտք է դիմէ Պ. Ստեփան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կելլայ:

Դիւերը դիւրամատչելի:



ՆԱԹԱՆ ՊԵՑ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

ՄԻՆԻՔՆԻ

Թագաւորական Ազադէմիաէն վկայուած

Կուտայ գաշնամուրի եւ ուրիշ նուագարաններու եւ երգի գասեր թէ՛ գործնականը թէ տեսականը, նաև Երաժշտութեան պատմութիւն:

Հասցէն Պատ. Ամիրխանեանցի բնակարանը:

Տ Պ Ա Ր Ա Ն



ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք: Այցետոմս, հասցետոմս, նոմական, իլուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմսակ եւ այլն եւ այլն թէ՛ պարզ և թէ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը աւազարուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին. Գին գրհացուցիչ: Դիմել Հայելիի խմբագրութեան:



ՆԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՕՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻՒՖԷՆՃԵԱՆ և ԸՆԿ

Հաճի Բանաքօին ճիշդ գէմը

Հարսանեաց և խնճոքներու սպասներ ալ կը գտնուին, որոնք դիւրամատչելի գիներով վարձու կը տրուին:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Пеница чат "Взаимонсть" — Варна.